

Հանրապետական առարկայական օլիմպիադա
Հայ գրականություն
XI դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

Միբեյի՛ մասնակից, անկաշառ սիրով ու վստահությամբ մտի՛ր գրականության կախարդական աշխարհ ու դարձի՛ր այդ աշխարհի լիիրավ տերը:
Հաղթանակ և բերկրանք եմ մատթում քեզ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան

1. Բնութագրի՛ր Սարոյի մորը Թումանյանի «Անուշ» պոեմում: Ներկայացրո՛ւ նրան ողբի տեսարանում: Ուրիշ ո՞ր բանաստեղծներն են անդրադարձել մոր կերպարին:
Համեմատի՛ր նրանց երգած մայրերին՝ ըստ քո ընտրած բանաստեղծությունների: 5 մ.

2. Ուվքե՞ր են ներքոհիշյալ հատվածների հեղինակները. ի՞նչ գիտես այդ հեղինակների մասին. ի՞նչն է ընդհանուր նրանց ճակատագրում: Գրի՛ր նրանց բնութագրող շրջասույթներ:

1.« Կինը ծիծաղ մըն է. պետք չէ, որ լացի փոխվի »:

2. Եկու՛ր, որդյա՛կ, հայրենի տունդ շենցուր.-

Դուռն են կոտրեր, մատաններն ո՛ղջ դատարկեր,

Կը՛ մտնեն ներս լուսամուտեն ջարդուփշուր

Գարնան ամբողջ ծիծառներ:

3. Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...

Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դու՛րս...

Փողոցներուն մեջ մորթված սերունդներ կտեսնեմ,

Եվ ամբոխներ անպատմելի սրածութենե դարձող...

5 մ.

3. Ի՞նչ է անվանել Չարենցը Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը: Ի՞նչ բանաստեղծություններ են ամփոփված այդ շարքում (նշի՛ր առնվազն 5 բանաստեղծություն), ու՞մ հետ է իրեն համեմատում Տերյանն այդ շարքում (գրի՛ր համապատասխան քառատողը): Ինչպիսի՞ տրամադրությամբ է ավարտվում շարքը (պատասխանի՛ր Տերյանի տողերով): 5 մ.

4. Ե՞րբ է Չարենցը գրել «Պատգամ» բանաստեղծությունը. ինչպիսի՞ մթնոլորտ էր տիրում Հայաստանում: Ի՞նչ է պատգամում Չարենցը: Արդիակա՞ն է Չարենցի պատգամը այսօր:

Գրի՛ր Չարենցին բնութագրող շրջասույթ:

5 մ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան